բազմութիւն։ Հասնելով Բուբաս[1] գետին, նա շարունակեց իւր ճանապարհը, մինչեւ որ Աղուանից գետի մօտ պատահեցաւ խաքանի խազարաց թագաւորի՝ որդուն, ճակատեցաւ նորա հետ, հալածեց նորան, սպանեց նորա ռազմիկները եւ գերեց մեծ բազմութիւն։ Առնելով Բալանջար, նա շրջեց զանազան գաւառներ, պարելով խազարաց թագաւոր խաքանին, մինչեւ հասաւ Դուինի գետը Արարատեան գաւառում. այստեղ տեղի ունեցած ճակատամարտում սպանեցաւ Ջառռահ իւր ամբողջ զօրագնդով հանդերձ։

105 Թ. Սայիդ ի. Աբդուլմալիք ի. Մրուան սպատակեց Թուրքաց երկիրը, իսկ Ջառռահ ի. Աբդուլլահ Հակամի արշաւեց դէպի Այանաց գուռը, մինչեւ անգամ անցաւ Բաբից։

107 Թ. Հիշամ գրեց Մասլամայ ի. Աբդուլմալիքին կառավարիչ Հայաստանի եւ Արարատեանի վերայ, նորա առաջապահ գնդի հետ ուղարկելով Սայիդ ի. Ամր Հարաշիին։ Սայիդ, պատահելով խազարաց զօրքին, որ իւր հետ ունէր 10,000 գերի մուսլիմներ, ճակատեցաւ նորա հետ, հալածեց նորան, սպանեց շատերին եւ ազատեց գերի մուսլիմներին, տիրելով բազմաթիւ քաղաքների. սպանեց նաեւ խաքանի որդուն, որի գլուխը նա ուղարկեց Հիշամին, առանց Մասլամայի հաւանութիւնն հարցնելու։ Այս բանը սակայն շարժեց Հիշամի բարկութիւնը, որ յանդիմանական թուղթ գրեց նորան, հեռացրեց նորան պաշտօնից եւ գրեց նորա տեղ Աբդուլմալիք ի. Մուսլիմ Օքայլին, հրամայելով նորան՝ կապանքների մէջ դնել Սայիդ ի. Ամր Հարաշիին եւ բանտարկել նորան Կապա-

---

1 Ըստ երեւութին՝ Արազ (արաբ. ալ-բաս) անուան աղաւաղումն է. կարդալու է ալբաս الراس փոխանակ الرباس.